ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2013

Հանրապետության Նախագահի 2013թ. փետրվարի 18-ի ընտրություններին Էլեկտրոնային եղանակով քվեարկություն

Էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեն

- ✓ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները.
- ✓ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները:

Էլեկտրոնային եղանակով քվեարկությունն իրականացվում է՝

- ✓ https://online.elections.am էջ այցելելով կամ
- ✓ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի՝ www.elections.am համապատասխան հղման միջոցով:

Հանրապետության Նախագահի 2013թ. փետրվարի 18-ի ընտրությունների էլեկտրոնային եղանակով քվեարկությունը՝

- ✓ **<u>սկսվում է</u> 09.02.2013թ-ից՝ Երևանի ժամանակով ժամը 08.00-ից.**
- ✓ **<u>ավարտվում է</u> 13.02.2013թ.՝ Երևանի ժամանակով ժամը 20.00-ին:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ՔԱՅԼ 1. ընտրողը մուտք է գործում կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի www.elections.am՝ էլեկտրոնային քվեարկության համապատասխան էջը և գրանցվում:



Գրանցումը կատարվում է հետևյալ կերպ.

1. ընտրողը համապատասխան դաշտերում մուտքագրում է իր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի սերիան և համարը, որի արդյունքում համակարգը ցուցադրում է ընտրողի անուն-ազգանունը.
2. մուտքագրում է փակ ծրարով իրեն փոխանցված անհատական ծածկագիրը.



3. համակարգը առաջարկում է ընտրողին ներմուծել իր՝ որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը: Յուրաքանչյուր ընտրող ինքն է որոշում իր օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը: Ցանկության դեպքում ընտրողը կարող է նշել իր էլեկտրոնային փոստի հասցեն: Օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը մուտքագրելուց հետո ընտրողի համար ապահովվում է համակարգի հասանելիությունը:

ՔԱՅԼ 2. Ընտրողը մուտք է գործում կայքի «Քվեարկել» բաժինը՝ մուտքագրելով օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը



ՔԱՅԼ 3. Ցուցադրվում է քվեաթերթիկը և ընտրողը ստանում է քվեարկելու հնարավորություն

Ընտրողը նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի դատարկ քառանկյունում, որին կողմ է քվեարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

Նշում կատարելուց հետո սեղմեք «Հաստատել քվեարկությունը» կոճակը

ամսաթիվ

Հաստատել քվեարկությունը

			Նշումի համար
1	Թեկնածու 1	կուսակցության անվանում կամ ինքնաառաջադրում	☐
2	Թեկնածու 2	կուսակցության անվանում կամ ինքնաառաջադրում	☐
3	Թեկնածու 3	կուսակցության անվանում կամ ինքնաառաջադրում	☐
4	Թեկնածու 4	կուսակցության անվանում կամ ինքնաառաջադրում	☐

ՔԱՅԼ 4. Ընտրողը կատարում է իր ընտրությունը՝ նշում կատարելով այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում: Քվեարկությունը կատարելուց հետո հաստատում է քվեարկության արդյունքը:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև էլեկտրոնային քվեարկության սահմանված ժամկետի ավարտը ընտրողը, մուտք գործելով կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի՝ էլեկտրոնային քվեարկության համապատասխան էջ, մուտքագրելով իր՝ ***որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը****, հնարավորություն ունի փոխել իր քվեն:*

Այդ դեպքում ընտրողի՝ նախկինում քվեարկած քվեաթերթիկը չի ցուցադրվում՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանման նպատակով:

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվարկվում է էլեկտրոնային քվեարկությամբ **տրված վերջին քվեն**:

Այն քվեաթերթիկները, որոնք չեն ներառի նշում որևէ թեկնածուի օգտին՝ համարվում են անվավեր: Այդ դեպքում ընտրողը համարվում է քվեարկությանը մասնակցած և չի ընդգրկվում ընտրողների հիմնական ցուցակում, քանի որ համակարգում բացակայում է կապը քվեաթերթիկի և էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակի միջև:

Էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում քվեարկության ավարտից հետո՝ 2013 թվականի փետրվարի 18-ին, Երևանի ժամանակով՝ ժամը 20:00-ից հետո:

Էլեկտրոնային քվեարկության կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի թիվ 19-Ն որոշմամբ, որին կարող եք ծանոթանալ հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Լրացուցիչ խորհրդատվություն կարող եք ստանալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից՝ հեռ. +37410 52-86-72, էլ. փոստի հասցե **info@elections.am**: